

**ԴՐԱՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՎՐԱ**

**ԱՐՄԵՆ ԸՈՔՈՑԱՆ
ԱՍՏԴԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԹԻՆԱ ՆԵՐՄԻՍՅԱՆ**

Ներածություն: Փոխանակային կուրսի փոփոխությունը երևույթ է, որը բնորոշ է և՛ զարգացած, և՛ զարգացող տնտեսություն ունեցող երկրներին: Այն պայմանավորված է մի շարք արտաքին և ներքին գործոններով: Ներքին գործոններից առաջինը, որը անմիջականորեն ազդում է փոխանակային կուրսի փոփոխմանը, այլ կերպ ասած դրամի արժևորմանը կամ արժեզրկամը, դրամավարկային քաղաքականությունն է, որը իրականացվում է Կենտրոնական բանկի կողմից սկսած 1993 թվականից¹: Դրամավարկային քաղաքականության միջոցով պետությունը փոփոխելով տոկոսադրույքները կարողանում է ազդել դրամի առաջարկի և պահանջարկի վրա, որն էլ ազդում է արժույթի փոխանակային կուրսի վրա: Արտաքին գործոնները նույնպես ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են փոխանակային կուրսի վրա: Գլոբալ ֆինանսական շուկաներում տեղի ունեցող փոփոխությունները, արտաքին պարտքի սպասարկումը կամ ապրանք-ծառայությունների համաշխարհային գները արտաքին գործոններ են: Նշվածներից վերջինի փոփոխությունը հանգեցնում է արտահանում/ներմուծում հարաբերակցության փոփոխությանը, տրամաբանորեն նաև ցուցանիշների տարբերությանը, որն էլ իրենից ներկայացնում է առևտրային հաշվեկշիռը:

TB = Ex – Im, որտեղ TB-ն առևտրային հաշվեկշիռն է, Ex-ը՝ արտահանումը Հայաստանից, Im-ը՝ ներմուծումը Հայաստան: Հայաստանի Հանրապետության առևտրային հաշվեկշիռը անկախության բոլոր տարիներին բացասական է եղել², որը կրկին կարող է պայմանավորված լինել ներքին և արտաքին մի շարք գործոններից: Աշխատանքի *նպատակն* է հետազոտել, թե դրամի արժևորումը ինչպես է ազդում Հայաստանի արտահանման և ներմուծման ծավալների վրա և դրանով ցույց տալ՝ գործընթացի տնտեսական հետևանքները առևտրային հաշվեկշիռի վրա: Խնդիր է դրվել ուսումնասիրել դրամ/դոլար փոխանակային կուրսի փոփոխությունը հատկապես վերջին տարիներին, քանի որ միջազգային և ներազգային մակարդակում տեղի ունեցող փոփոխությունները խիստ ազդել են արժույթների փոխանակային կուրսի վրա, ընդ որում դրամի արժևորումն ու արժեզրկումն է դիտարկվել դոլարի նկատմամբ, քանի որ Հայաստանի արտաքին

¹ ՀՀ Կենտրոնական բանկ. դրամավարկային քաղաքականության պատմությունը և զարգացումը

² Հայաստանի Հանրապետության վիճակագրության կոմիտե, Արտաքին հաշիվներ

առևտրի 50 տոկոսից ավելին կատարվում է դոլարով³, ներկայացնել մաթեմատիկական կապ դրամի արժևորման և Հայաստանի առևտրային հաշվեկշռի միջև և ըստ դրա մեկնաբանել տնտեսական դրական կամ բացասական ազդեցությունը, որպես կանոն, երբ ուսումնասիրվում է համաշխարհային փորձը, տվյալ երկրի արժույթի արժևորումը բացասական է ազդում առևտրային հաշվեկշռի վրա, սա ընդհիպոթեզներով որպես սկզբնական հիպոթեզ, խնդիր է դրվում բացահայտել դրա ճշմարտացիությունը կամ ընդունել մեկ այլ հիպոթեզ, ըստ որի Հայաստանի դեպքում պատմական տվյալները ցույց են տալիս, որ արժույթի արժևորումը դրական է ազդել առևտրային հաշվեկշռի վրա: Որպես ուսումնասիրության մեթոդ ընտրվել է վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը և դրանց միջև մաթեմատիկական կապի՝ կոռելյացիոն գործակցի հաշվարկը:

Գրականության ակնարկ: Թեման հաճախ է հայտնվում մասնագետների և հետազոտողների ուշադրության կենտրոնում: Հայտնի աշխատանքներից է 2024 թվականի փետրվարին լույս տեսած “Փոխարժեքների և առևտրային հաշվեկշռի դինամիկա. քվանտիլային ռեգրեսիայի վերլուծություն”-ը⁴, հեղինակ՝ Թեո Գելդներ: Աշխատանքում ներկայացված է G10-ի երկրներում փոխանակային կուրսի փոփոխության և առևտրային հաշվի միջև առկա կապը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ կարճաժամկետում ազդեցությունը բացասական է, բայց երկարատևում՝ կարող է նպաստել առևտրային հաշվի աճին, ընդ որում այս փոխազդեցության գրաֆիկական կորը ունի J տառի տեսքը և գրականության մեջ անվանվում է J-curve: 2023 թվականի դեկտեմբերին Մուհամադ Մուզամմիլի կողմից հրապարակված “Զարգացող տնտեսություններում փոխարժեքի տատանումները և առևտրային հաշվեկշիռը”⁵ աշխատանքում ուսումնասիրվում է զարգացող երկրներում արժույթ-առևտրային հաշվեկշիռ փոխհարաբերությունը, ընդ որում երկկողմանի: Արդյունքում պարզ է դարձել, որ զարգացող երկրներում արժույթի արժևորումը հաճախ ոչ կանխատեսելի ազդեցություն է ունենում առևտրային հաշվեկշռի վրա:

“Փոխարժեքի և առևտրային հաշվեկշռի փոխհարաբերությունը. ԱՄԵԱՆ երկրների փորձը”⁶-ում, հեղինակ՝ Վենուս Խիմ-Սեն, այս փոխազդեցությունը ուսումնասիրված է ASEAN-5 երկրների շրջանակում, շեշտը դնել իրական, ոչ թե անվանական փոխանակային կուրսի վրա: Եվ արդյունքում պարզ է դարձել, որ

³ Radostin Neykov, Caroline Robert, The Role of the Euro in the Eastern Partnership Countries, European economy, February 2021, page 53-54 and 39-40

⁴ Teo Geldner, Exchange rates and trade balance dynamics: a quantile regression analysis, Taylor and Francis, 14 Feb 2024թ, page 1070-1100

⁵ Muhammad Muzammil, Mahnaz Muhammad Ali, Tanveer Bagh, Exchange rate movements and trade balance in developing economies: Evidence of symmetry and country-specific asymmetries, Taylor and Francis, 20 Aug 2024, page 20-27

⁶ Venus Khim-Sen Liew, Kian-Ping Lim, Huzaimi Hussain, Exchange Rate and Trade Balance Relationship: The Experience of ASEAN Countries, Research Gate, August 2003, page 7-13

երբ փոխանակային կուրսը նվազում է, դա ոչ միշտ է հանգեցնում առևտրային հաշվեկշռի բարելավման և դրա ազդեցությունը գերազնահատված է:

Ամփոփելով կարելի է նկատել, որ աշխատանքներից յուրաքանչյուրում բավականին տարբեր են արդյունքները, չնայած ընդունված համընդհանուր տեսակետին, որը աշխատանքում ընդունվել է որպես սկզբնական հիպոթեզ, ինչը կրկին փաստում է, որ մի շարք հանգամանքներից կախված փոխազդեցությունը կարող է բավականին տարբեր լինել: Փոլ Կրուգման և Լենս Թեյլոր «Արժեզրկման կծկող ազդեցությունները»⁷ հոդվածում ուսումնասիրում են արժույթի արժեզրկման ազդեցությունը զարգացող երկրների տնտեսությունների վրա: Հեղինակները ցույց են տալիս, որ փոխարժեքի արժեզրկումը կարող է ոչ թե բարելավել, այլ հակառակը՝ վատթարացնել առևտրային հաշվեկշիռը՝ պայմանավորված ներմուծման ծախսերի աճով և արտադրական կառուցվածքային սահմանափակումներով: Ռուդիգեր Դորնբուշ «Փոխանակային կուրսերը և ինֆլացիան»⁸ աշխատությունում վերլուծում է փոխարժեքի փոփոխությունների փոխանցումը գների և արտաքին առևտրի վրա: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ փոքր բաց տնտեսություններում փոխարժեքի փոփոխությունները հաճախ չեն հանգեցնում ակնկալվող առևտրային հաշվեկշռի բարելավման:

Սեբաստիան Էդվարդս իր «Իրական փոխարժեքներ, արժեզրկում և տնտեսության ճշգրտում»⁹ մենագրությունում ուսումնասիրում է իրական փոխարժեքի դերը վճարային և առևտրային հաշվեկշռի հավասարակշռման գործընթացում: Նա եզրակացնում է, որ փոխարժեքի արժևորումը կամ արժեզրկումը արդյունավետ է միայն կառուցվածքային բարեփոխումների համատեքստում: Բահմանի-Օսկուի և Ռաթա «J-կորի էֆեկտը. գրականության ակնարկ»¹⁰ հոդվածում համակարգված կերպով ամփոփում են փոխարժեքի և առևտրային հաշվեկշռի փոխկապակցության վերաբերյալ էմպիրիկ հետազոտությունները: Աշխատանքը ցույց է տալիս, որ J-կորի ազդեցությունը դրսևորվում է ոչ բոլոր երկրներում և ունի ժամանակային ուշացում:

Ռոուզ և Ելեն «Կա՞րող է J-կոր»¹¹ հոդվածում քննադատում են J-կորի համընդհանուր կիրառելիությունը: Հեղինակների վերլուծությունը ցույց է տալիս,

7 Paul krugman, Lance Taylor, contractionary effects of devaluation, Journal of International Economics 8, North-Holland Publishing, February 1977. page 445-456

8 rudiger dornbusch, Inflation, Exchange Rates and Stabilization, Essays in International Finance, 165, October 1986, page 8-11

9 Sebastian Edwards, "Real Exchange Rates, Devaluation, and Adjustment", MIT Press, 1989, page 3-7

10 Mohsen Bahmani-Oskooee, Arta Ratha, "The J-Curve: A Literature Review", Applied Economics, 2004, page 2-5

11 Andrew Rose, Janet Yellen, "Is There a J-Curve?", Journal of Monetary Economics, July 1989, page 6-12

որ մի շարք տնտեսություններում փոխարժեքի փոփոխությունները չեն ունեցել էական ազդեցություն առևտրային հաշվեկշռի վրա:

Զեֆրի Ֆրենկել «Տարածաշրջանային առևտրային բլոկները և փոխարժեքային քաղաքականությունը»¹² աշխատությունում շեշտում է, որ արտաքին շուկաներից մեծ կախվածություն ունեցող երկրների դեպքում փոխարժեքային քաղաքականության ազդեցությունը առևտրի վրա սահմանափակ է:

Միջազգային դրամական հիմնադրամի «Փոխարժեքների գնահատում. CGER մեթոդաբանություն»¹³ զեկույցում ներկայացվում են փոխարժեքի գնահատման առաջատար մոդելները և դրանց կապը արտաքին հավասարակշռության հետ: Զեկույցը կարևորում է կառուցվածքային և ինստիտուցիոնալ գործոնների դերը փոխարժեքի ազդեցության գնահատման մեջ:

Մեթոդաբանություն: Հետազոտությունն իրականացվել է վիճակագրական և վերլուծական մեթոդների համակցությամբ: Ուսումնասիրության համար օգտագործվել են Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի, Վիճակագրության կոմիտեի, Համաշխարհային բանկի և այլ պաշտոնական աղբյուրների տվյալները: Վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են դրամ/դոլար փոխանակային կուրսի, արտահանման, ներմուծման և առևտրային հաշվեկշռի ցուցանիշների դինամիկան 2017–2025 թվականների ընթացքում:

Փոխազդեցության բնույթը բացահայտելու նպատակով կիրառվել է գրաֆիկական վերլուծություն, ինչպես նաև հաշվարկվել է կոռելյացիոն գործակիցը՝ դրամի փոխանակային կուրսի և առևտրային հաշվեկշռի միջև քանակական կապը և դրա ուղղությունը գնահատելու համար: Անկախ փոփոխական է ընտրվել դրամ/դոլար փոխարժեքը, իսկ կախյալ փոփոխական՝ Հայաստանի Հանրապետության առևտրային հաշվեկշիռը:


Ստացված արդյունքները մեկնաբանվել են տնտեսական տեսության և միջազգային փորձի համատեքստում՝ նպատակ ունենալով գնահատել դրամի արժևորման և արժեզրկման հնարավոր տնտեսական հետևանքները Հայաստանի արտաքին առևտրի վրա:

Վերլուծություն: Դրամի փոխարժեքը դոլարի նկատմամբ վերջին մի քանի տարիներին բավականին անկայուն է եղել: Կտրուկ արժևորումներն ու արժեզրկումները տեսականորեն պետք է ազդեին արտահանման և ներմուծման ծավալների վրա, մասնավորապես դրամի արժևորման շրջանում արտահանումը թանկանում է, ներմուծումը՝ էժանանում, և հակառակը: Ուստի անհրաժեշտ է դիտարկել դրամի փոխանակային կուրսի փոփոխությունը դոլարի նկատմամբ վերջին տարիներին, գրաֆիկորեն ներկայացնելիս այն կունենա հետևյալ տեսքը.

¹² Jeffrey Frankel, “Regional Trading Blocs and Exchange Rate Policy”, NBER Working Paper Series, November 1997, page 8-12

¹³ International Monetary Fund, “Exchange Rate Assessments: CGER Methodology”, IMF Occasional Papers, 2013

Գծապատկերում ներկայացված է դրամ/դոլար փոխանակային կուրսը 2017-2025թթ., ընդ որում կիսամյակային տվյալներով: Ակնառու է, որ 2020 թվականի երկրորդ կիսամյակում դրամի կուրսը կտրուկ անկում է գրանցել, որը մեծամասամբ պայմանավորված է եղել երկրի պատերազմական դրությամբ, որը անորոշություն ստեղծեց, կրճատվեցին ներդրումները և դրամական փոխանցումները, Հայաստանում կապիտալ ունեցողներն դա վերաձեցին դոլարի կամ այլ <<ապահով>> արժույթի: Դրանից հետո 2022 թվականի երկրորդ կիսամյակի աճը պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ տնտեսությունը սկսեց քիչ-քիչ կայունանալ և դրան զուգահեռ ռուս-ուկրաինական պատերազմի ֆոնին ավելացավ ներգաղթողների թիվը Հայաստան, ինչն էլ նպաստեց մի շարք ոլորտների, մասնավորապես տո-ի զարգացմանը:




Գծապատկեր 1– Դրամ/դոլար փոխանակային կուրսը 2017-2025թթ.¹⁴

Դրամի կուրսի փոփոխությանը զուգահեռ փոխվել է նաև առևտրային հաշվեկշռի ցուցանիշները: Որպեսզի հստակ երևա կապը գրաֆիկորեն ներկայացված է նաև առևտրային հաշվեկշռի ցուցանիշները նույն՝ 2017-2025թթ.

Գծապատկերում ներկայացված են արտահանման, ներմուծման թվերը (հազար դոլարով) և դրանց տարբերությունը՝ առևտրի հաշվեկշիռը: Ինչպես նշվել է արտահանումը երբևէ չի գերազանցել ներմուծմանը, ինչի արդյունքում առջևի հաշվեկշիռը միշտ բացասական է եղել, սակայն կարելի է նկատել նաև որ ներմուծման և արտահանման ծավալները գրեթե հավասարաչափ են աճել: 2024 թվականի կտրուկ աճը պայմանավորված էր հիմնականում նրանով, որ Հայաստանը տնտեսագետների մեկնաբանությամբ արտահանում էին այն, ինչ չունեին: Սա նշանակում է, որ Հայաստանը Ռուսաստանի համար տրանզիտ կամ միջանկյալ երկիր էր, հատկապես մեծ քանակությամբ ոսկի էր ներմուծվում Հայաստան և արտահանվում, ինչի շնորհիվ էլ երկու ցուցանիշներն էլ կտրուկ

¹⁴ Կառուցվել է հեղինակի կողմից <https://www.google.com/finance/quote/AMD-USD?> -ի տվյալների հիման վրա

աճեցին: Սակայն հետո սահմանափակումների խստացման պատճառով գործընթացը դադարեց լինել շարունակական, ինչն էլ հանգեցրեց 2025 թվականի առաջին կիսամյակի ցածր ցուցանիշներին: Ընդ որում կարևոր է նշել նաև, որ առաջին երեք հորիզոնականը ներմուծման և արտահանման գծով ներկայացված և ոչ մի տարում չի փոփոխվել՝ Եվրոպա, Ռուսաստան, Արևելյան Ասիա: Սա կարևոր է նկատի ունենալ, հասկանալու համար, որ բացասական առևտրի հաշվեկշիռը նախ և առաջ ենթադրում է մեծ կախվածություն արտաքին աշխարհից:



Գծապատկեր 2 - Հայաստանի Հանրապետության արտահանում, ներմուծում և առևտրի հաշվեկշիռը 2017-2025թթ.¹⁵

Գծապատկեր 1-ի և 2-ի տվյալների ուսումնասիրությունը թույլ է տալիս մերժել սկզբնական հիպոթեզը, այն է. դրամի արժևորումը բերում է առևտրի հաշվեկշռի վատթարացման, և հակառակը՝ դրամի արժեզրկումը բարելավում է առևտրի հաշվեկշիռը: Կարելի է նկատել, որ հիպոթեզը ճիշտ է եղել միայն 2019-2020թթ. թվականին, երբ դրամի արժեզրկվել է՝ բերելով առևտրի հաշվեկշռի աճին, 2020-2021թթ. թվականին, երբ դրամի արժևորումը հանգեցրել է առևտրի հաշվեկշռի անկման և 2022-2023թթ., երբ կրկին դրամը արժևորվել է: Մնացած բոլոր տարիներին այս երկու ցուցանիշները փոփոխվել են միևնույն ուղղությամբ: Ինչքան էլ գրաֆիկորեն պատկերը հստակ է, փոխազդեցությունը ավելի հստակ ներկայացնելու համար անհրաժեշտ է ներկայացնել մաթեմատիկական կապ, որի լավագույն տարբերակը տվյալ օրինակում կոռելյացիոն գործակցի

¹⁵ Կազմվել է հեղինակի կողմից <https://tradingeconomics.com/armenia/exports-by-country-h> տվյալների հիման վրա

հաշվարկն է, քանի որ անհրաժեշտ է ինֆորմացիա ոչ միայն երկու ցուցանիշների միջև կախվածության մասին, այլ նաև՝ ուղղության: Կոռելյացիոն գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$r = [n\Sigma xy - (\Sigma x)(\Sigma y)] / \sqrt{[n\Sigma x^2 - (\Sigma x)^2][n\Sigma y^2 - (\Sigma y)^2]}^{16}$$

Քանի որ դիտարկում ենք դրամի փոխանակային կուրսի փոփոխության(արժևորման) ազդեցությունը առևտրի հաշվեկշռի վրա, որպես անկախ փոփոխական AMD/USD փոխարժեքը(x), որպես կախյալ փոփոխական՝ առևտրի հաշվեկշռը(y), իսկ n-ը ներկայացված տարիների քանակն է:

Վերցնելով AMD/USD փոխարժեքի տարեկան միջին ցուցանիշը կոռելյացիոն գործակցի արժեքը ստանում ենք $r = -0.26$, ինչը նշանակում է, որ ցուցանիշները ունեն հակադարձ կապ, քանի որ $r < 0$, բայց այդ կապը բավականին թույլ է, քանի որ r-ի արժեքը բավականին փոքր է:

R-ի արժեքը խոսում է այն մասին, որ փոքր երկրների դեպքում, ինչպիսին Հայաստանն է, որը մեծ կախվածություն ունի արտաքին շուկաներից, արժույթի տատանումը չի կարող մեծ դեր ունենալ առևտրի հաշվեկշռի վրա: Հայաստանի ներմուծման կառուցվածքը ուսումնասիրելիս նկատում ենք, որ ներմուծված ապրանքների շարքը գլխավորում են հետևյալները. նավթ, բնական գազ, հացահատիկային մշակաբույսեր և էլեկտրական մեքենաներ¹⁷: Պարզ է, որ սրանցից որևէ մեկի հաշվին Հայաստանը չի կարող նվազեցնել արտահանումը, ընդ որում, դրա ծավալների փոքրացումը առաջին հայացքից առևտրի հաշվեկշռի բարելավման տեսանկյունից դրական են, սակայն երկարաժամկետում կարող են խիստ բացասական ազդել երկրի տնտեսության վրա:

Եզրակացություն: Ամփոփելով վերը ներկայացվածը կարելի է ասել, որ չնայած ընդունված տեսակետին, դրամի արժևորումը չի բերում առևտրի հաշվեկշռի աճին, հետևաբար եթե նույնիսկ կենտրոնական բանկը փորձի դրամի պահանջարկը մեծացնելու շնորհիվ արժևորի այն, միանշանակ ասել, որ դա դրական կազդի առևտրի հաշվեկշռի վրա՝ չի կարելի: Հայաստանը խիստ կախված է արտաքին շուկաներից, և ներմուծվող ռեսուրսների մեծ մասը Հայաստանը չի կարող որևէ այլ կերպ լրացնել, որովհետև դրանց քանակությունը կամ սակավ է կամ ընդհանրապես չկա: Այնուամենայնիվ, այն մթերքները, որոնք ստեղծելու պոտենցիալը Հայաստանը ունի, պետք է զարգանան, օրինակ հացահատիկային մշակաբույսերի մասով որոշակի սուբսիդիաների կամ այլ տեսակի աջակցության տրամադրումը կարող է դրական ազդեցություն ունենալ: Լավ լուծում է նաև տուրիստական ծառայությունների զարգացումը, որը նույնպես դիտարկվում է որպես արտահանում:

Արտահանումը զարգացնելը Հայաստանի դեպքում նույնպես հեռանկարային է: Առաջին հերթին կրկին կարող են նշել գյուղմթերքների

¹⁶ Scribbr, <<Կոռելյացիոն գործակիցը՝ բացատրություն և հաշվարկի ուղեցույց>>, Scribbr, 2025թ. <https://www.scribbr.com/statistics/correlation-coefficient/>

¹⁷ <<Հայաստանի ներմուծումները>>, TradingEconomics, 2025 թ. <https://tradingeconomics.com/armenia/imports>

արտահանումը, ինչի փորձը Հայաստանն արդեն ունի, տո ոլորտի արագ աճի տեմպերը ցույց են տալիս, որ դա նույնպես կարող է դառնալ արտահանվող ծառայություններից մեկը, որը ունի մեծ օգուտներ բերելու տեսլական: Եվ կարևոր է նաև նոր շուկաների բացահայտումը, քանի որ Հայաստանը հիմնականում արտահանում է Ռուսաստան, ԵԱՏՄ և մասամբ ԵՄ, ուստի նոր շուկաների բացահայտումը տնտեսական մեծ օգուտներ կարող է ապահովել Հայաստանի համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Teo Geldner, Exchange rates and trade balance dynamics: a quantile regression analysis, Taylor and Francis, 14 Feb 2024թ, page 1070-1100
2. Muhammad Muzammil, Mahnaz Muhammad Ali, Tanveer Bagh, Exchange rate movements and trade balance in developing economies: Evidence of symmetry and country-specific asymmetries, Taylor and Francis, 20 Aug 2024, page 20-27
3. Venus Khim-Sen Liew, Kian-Ping Lim, Huzaimi Hussain, Exchange Rate and Trade Balance Relationship: The Experience of ASEAN Countries, Research Gate, August 2003, page 7-13
4. Paul krugman, Lance Taylor, contractionary effects of devaluation, Journal of International Economics 8, North-Holland Publishing, February 1977. page 445-456
5. Rudiger Dornbusch, Inflation, Exchange Rates and Stabilization, Essays in International Finance, 165, October 1986, page 8-11
6. Sebastian Edwards, “Real Exchange Rates, Devaluation, and Adjustment”, MIT Press, 1989, page 3-7
7. Mohsen Bahmani-Oskooee, Arta Ratha, “The J-Curve: A Literature Review”, Applied Economics, 2004, page 2-5
8. Andrew Rose, Janet Yellen, “Is There a J-Curve?”, Journal of Monetary Economics, July 1989, page 6-12
9. Jeffrey Frankel, “Regional Trading Blocs and Exchange Rate Policy”, NBER Working Paper Series, November 1997, page 8-12
10. International Monetary Fund, “Exchange Rate Assessments: CGER Methodology”, IMF Occasional Papers, 2013
11. Scribbr, <<Կորելյացիոն գործակիցը՝ բացատրություն և հաշվարկի ուղեցույց>>, Scribbr, 2025թ. <https://www.scribbr.com/statistics/correlation-coefficient/>
12. ՀՀ Կենտրոնական բանկ. դրամավարկային քաղաքականության պատմությունը և զարգացումը. - <https://is.gd/2AIykd>
13. Հայաստանի Հանրապետության վիճակագրության կոմիտե. - <http://armstat.am/am/?nid=203>
14. ՀՀ Կենտրոնական բանկ. դրամավարկային քաղաքականության պատմությունը և զարգացումը. - <https://is.gd/2AIykd>

15. Հայաստանի Հանրապետության վիճակագրության կոմիտե. - <http://armstat.am/am/?nid=203>

ԴՐԱՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՎՐԱ

ԱՐՄԵՆ ԸՌՔՈՑԱՆ ԱՍՏԴԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ ԹԻՆԱ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Համառոտագիր: Ժամանակակից տնտեսությունում փոխանակային կուրսի տատանումները հանդիսանում են մակրոտնտեսական կարևորագույն գործոններից մեկը՝ հատկապես բաց և փոքր տնտեսությունների համար: Հայաստանի Հանրապետության դեպքում դրամի փոխարժեքի փոփոխությունները վերջին տարիներին առանձնակի արդիականություն են ձեռք բերել՝ պայմանավորված համաշխարհային տնտեսական ճգնաժամերով, տարածաշրջանային ռազմական դրությամբ և արտաքին տնտեսական շոկերով: Այս համատեքստում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում դրամի արժևորման ազդեցության ուսումնասիրությունը Հայաստանի արտաքին առևտրի և մասնավորապես առևտրային հաշվեկշռի վրա:

Հոդվածի նպատակն է բացահայտել դրամ/դոլար փոխանակային կուրսի փոփոխությունների ազդեցությունը Հայաստանի արտահանման և ներմուծման ծավալների վրա և գնահատել այդ ազդեցության տնտեսական հետևանքները առևտրային հաշվեկշռի տեսանկյունից: Հետազոտության շրջանակում խնդիր է դրվել վերլուծել դրամի փոխարժեքի դինամիկան վերջին տարիներին, բացահայտել դրա և առևտրային հաշվեկշռի միջև քանակական կապը, ինչպես նաև ստուգել դասական տնտեսական տեսության մեջ ընդունված այն հիպոթեզը, ըստ որի արժույթի արժևորման արդյունքում առևտրային հաշվեկշիռը վատթարանում է:

Ուսումնասիրությունը հիմնված է 2017–2025 թվականների վիճակագրական տվյալների վրա: Որպես հետազոտական մեթոդներ կիրառվել են գրաֆիկական և վիճակագրական վերլուծությունները, ինչպես նաև հաշվարկվել է կոռելյացիոն գործակիցը՝ փոխարժեքի և առևտրային հաշվեկշռի միջև կապի ուղղությունն ու ուժգնությունը գնահատելու համար:

Թեմայի ուսումնասիրության աստիճանը ցույց է տալիս, որ միջազգային գիտական գրականությունում առկա են հակասական արդյունքներ. զարգացած և զարգացող երկրների փորձը փաստում է, որ փոխարժեք–առևտրային հաշվեկշիռ կապը միանշանակ չէ և կախված է երկրի տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններից: Ներկայացված հետազոտությո-

յունը լրացնում է այս բացը՝ անդրադառնալով Հայաստանի օրինակին և նպաստելով տվյալ խնդրի ավելի խորքային ըմբռնմանը:

Բանալի բառեր. դրամ, դոլար, առևտրային հաշվեկշիռ, ապրանք, ծառայությունների արտահանում, ներմուծում:

ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ОЦЕНКИ ВАЛЮТЫ ДЛЯ ТОРГОВОГО БАЛАНСА АРМЕНИИ

**АРСЕН ЭРКОЯН
АСТХИК ТАДЕВОСЯН
ТИНА НЕРСИСЯН**

Аннотация

В современной экономике колебания валютного курса являются одним из важнейших макроэкономических факторов, особенно для малых открытых экономик. В случае Республики Армения изменения курса драма в последние годы приобрели особую актуальность, что обусловлено глобальными экономическими кризисами, региональной военной обстановкой и внешними экономическими шоками. В данном контексте особый интерес представляет изучение влияния укрепления драма на внешнюю торговлю Армении, в частности на торговый баланс.

Целью данной статьи является выявление влияния изменений обменного курса драма к доллару США на объемы экспорта и импорта Армении, а также оценка экономических последствий этих изменений с точки зрения торгового баланса. В рамках исследования поставлены задачи проанализировать динамику обменного курса драма в последние годы, выявить количественную связь между валютным курсом и торговым балансом, а также проверить гипотезу, принятую в классической экономической теории, согласно которой укрепление национальной валюты приводит к ухудшению торгового баланса.

Исследование основано на статистических данных за период 2017–2025 гг. В качестве методов исследования использованы графический и статистический анализы, а также расчет коэффициента корреляции для оценки направления и силы связи между валютным курсом и торговым балансом.

Степень изученности темы показывает, что в международной научной литературе представлены противоречивые результаты. Опыт развитых и развивающихся стран свидетельствует о том, что связь между валютным курсом и торговым балансом не является однозначной и во многом зависит от структурных особенностей национальной экономики. Представленное исследование восполняет данный пробел, рассматривая пример Армении и способствуя более глубокому пониманию данной проблемы.

Ключевые слова: деньги, торговый баланс, товары, экспорт услуг, импорт.

ECONOMIC EFFECTS OF CURRENCY VALUATION ON ARMENIA'S TRADE BALANCE

ARSEN ERKOYAN
ASTGHIK TADEVOSYAN
TINA NERSISYAN

Abstract

In the modern economy, exchange rate fluctuations represent one of the most important macroeconomic factors, especially for small open economies. In the case of the Republic of Armenia, changes in the exchange rate of the dram have gained particular relevance in recent years due to global economic crises, regional military tensions, and external economic shocks. In this context, special attention is given to studying the impact of the appreciation of the dram on Armenia's foreign trade, particularly on the trade balance.

The purpose of this article is to identify the effects of changes in the AMD/USD exchange rate on Armenia's export and import volumes and to assess the economic consequences of these changes from the perspective of the trade balance. Within the framework of the study, the objectives include analyzing the dynamics of the dram exchange rate in recent years, identifying the quantitative relationship between the exchange rate and the trade balance, and testing the hypothesis commonly accepted in classical economic theory, according to which currency appreciation leads to a deterioration of the trade balance.

The study is based on statistical data covering the period from 2017 to 2025. The research methods applied include graphical and statistical analyses, as well as the calculation of a correlation coefficient to evaluate the direction and strength of the relationship between the exchange rate and the trade balance.

The degree of investigation of the topic indicates that the international academic literature presents contradictory results. The experience of both developed and developing countries demonstrates that the relationship between the exchange rate and the trade balance is not unambiguous and largely depends on the structural characteristics of the national economy. The present study contributes to filling this gap by focusing on the case of Armenia and promoting a deeper understanding of the issue.

Keywords: Money, trade balance, goods, export of services, import.